

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

**20.03.2019թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,  
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,  
Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը  
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,  
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ.Մարտիրոսովան,  
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքումյանը,  
ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,  
ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,  
ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,  
ՀՀ ՎԿ տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ.Թորոսյանը,  
ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն.Մանդալյանը,  
ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգայի հաշիվների բաժնի պետ Լ.Խաչատրյանը,  
ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,  
ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ.Եղիազարյանը,  
ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շախգելոյանը,  
ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը,  
ՀՀ ՎԿ «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի վիճակագիր Ա. Պողպոմոզովան,

ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը,  
ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը:

**Նիսպրում լավեցին հետևյալ հարցերը.**

1. ««Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» ձև 35-պատահար (ամսական), «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» (անկախ ինքնաթիռի, ուղղաթիռի պատկանելության) ձև 30-ՔԱ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև 1-ավիա (ամսական), «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև 1-չարտեր (տարեկան), «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև 12-ՔԱ (տարեկան), «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» ձև 34-ՔԱ (տարեկան) և «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև 65-ավիա (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ 06-ն, 07-ն, 08-ն, սեպտեմբերի 22-ի թիվ 13-ն, 2014 թվականի մայիսի 19-ի թիվ 23-ն, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 23-ն, 24-ն, որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Թորոսյան /*

**Որոշեցին՝**

**հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:**

*/Նորմատիվ/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների, զբաղմունքի «պաշտոնի և մասնագիտության» որակավորման եռանիշ խմբերի ՄԱԿ-ի զարգացման ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քայանթարյան/*

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրին (ՄԱՁԾ) տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների, զբաղմունքի / պաշտոնի և մասնագիտության / որակավորման եռանիշ խմբերի, սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված տվյալները կարող են օգտագործվել բացառապես «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան:

*/Անհապրական/*

3. «Եվրամիության վիճակագրական ծառայության, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից 2018 թվականին իրականացված Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատման արդյունքում ներկայացված առաջարկությունների մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/*

**Որոշեցին՝**

1. Ընդունել ի գիտություն և հաստատել սույն որոշման նախաբանում նշված առաջարկությունները՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկություններն ընդունել որպես ուղենիշ Կոմիտեի գործունեության ընթացքում:
3. Իրականացնել իրազեկման միջոցառումներ առաջարկություններում նշված այլ սուբյեկտների շրջանում՝ իրենց իրավասության սահմաններում առաջարկությունները կատարելու համար:
4. Կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետում Կոմիտեի նախագահի ստորագրմանը ներկայացնել առաջարկությունների իրականացման և այդ գործընթացի մշտադիտարկման համար պատասխանատուների վերաբերյալ հրամանի նախագիծը:

*/Անհապրական/*

4. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի ««ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 186 համայնքների (բնակավայրերի)» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելուն հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի ««ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 186 համայնքների (բնակավայրերի)» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման վերնագրում, 1-ին կետում և Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի վերնագրում «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության» բառերը փոխարինել «Վիճակագրական կոմիտեի» բառերով, ինչպես նաև «186 համայնքների (բնակավայրերի) ցանկը» բառերը փոխարինել «համայնքների՝ 186 բնակավայրերի» բառերով,

2) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 11-րդ տողի 1-ին սյունակից հանել «Փարպի (Աշտարակի շրջ.)» բառերը և 8-րդ տողի 9-րդ սյունակում ավելացնել «Ելփին (Եղեգնաձորի շրջ.)» բառերը:

*/Անհապական/*

5. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «2019 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 70-Ն որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել հավելված 1-ի «4.1 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» բաժնի 6-րդ և 21-րդ կետերը, ինչպես նաև 3-րդ կետից «ըստ մարզերի,» բառերը հանել.

2) հավելված 6-ի «ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» բաժնի «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ» տողից հանել «մարզի ծածկագիրը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*/Նորմատիվ/*

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2019 թվականի ապրիլի 9-ից 10-ը ՌԴ դաշնային վիճակագրության ծառայության և Համաշխարհային Բանկի կողմից Մոսկվա քաղաքում կազմակերպված «Բնապահպանական ծախսերի ինդեքսի և ֆիզիկական ծավալների ցուցանիշների ձևավորումը միջազգային պահանջներին համապատասխան» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ն.Մանդայան, Ա.Պողպոմոզովա/*

6.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2019 թվականի ապրիլի 9-ից 12-ը Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Հարավ Արևելյան Եվրոպայի երկրների համար՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպայի ազատ առևտրի ասոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության համատեղ ջանքերով կազմակերպված Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի «Գլոբալ արտադրություն» թեմայով 18-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Խաչարյան /*

6.3. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2019 թվականի ապրիլի 15-ից 17-ը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների (MICS) իրականացմանը նվիրված աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Գևորգյան, Ռ.Հովհաննիսյան/*

6.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2019 թվականի ապրիլի 15-ից 18-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) վիճակագրության համար վիճակագրության գծով երրորդ փորձագիտական հանդիպմանը և ԿՁՆ-ի համար վիճակագրության վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան /*

**6.5. Հաղորդում՝ Կորեայի Դեջոն քաղաքում 2019 թվականի ապրիլի 15-ից 19-ը Կայուն զարգացման համար մեծ տվյալների վերաբերյալ տարածաշրջանային ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Հ.Եղիազարյան, Ս.Շախգերյան/*

**6.6. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2019 թվականի ապրիլի 22-ից 24-ը Վաշինգտոն խմբի (Washington Group) նախաձեռնությամբ կազմակերպված՝ «Հաշմանդամության գնահատումը և Վաշինգտոն խումբը հաշմանդամության վիճակագրության մասին» խորագրով տարածաշրջանային իրագործման և տեխնիկական աջակցության աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Կ.Կոյունջյան, Ա.Հակոբյան /*

**6.7. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2019 թվականի մայիսի 6-ից 8-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից կազմակերպված բնապահպանական մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի 21-րդ նիստին և բնապահպանական տվյալների առաջին տարածաշրջանային համաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան /*

**6.8. Հաղորդում՝ Հունաստանի Աթենք քաղաքում 2019 թվականի մայիսի 14-ից 17-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Փոքր տարածքների գնահատում» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ա.Մարտիրոսյան, Ն.Գրիգորյան/*

**6.9. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2019 թվականի մայիսի 8-ից 10-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) վիճակագրության որակի բարելավման համար հետազոտությունների և ուսումնասիրությունների հզորացում Ծրագրի մեկնարկային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ա.Սաֆյան, Դ.Մարտիրոսովա/*

**6.10. Հաղորդում՝ Շվեյցարիայի Նյուշատել քաղաքում 2019 թվականի մայիսի 13-ից 17-ը «Վիճակագրություն և տվյալներ» ծրագրի շրջանակում կազմակերպված աշխատաժողովին՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի երկրների մասնագետների կարողությունների զարգացման համար և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ), ՄԱԿ-ի Կանանց և Շվեյցարիայի Ֆեդերալ վիճակագրական գրասենյակի հետ համատեղ կազմակերպված «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Լ.Քալանթարյան/*

**Որոշեցին՝  
արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն  
ընդունել ի գիտություն**

*/Անհապրական/*

**17.06.2019թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը,  
Լ.Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքունյանը,
- ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը,
- ՀՀ ՎԿ որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,
- ՀՀ ՎԿ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի առաջին կարգի մասնագետ Վ. Մաճկալյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Զանլաթյանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հովհաննիսյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը,



ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան,  
«Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի օգնական Արմինե Քոսակյանը,

### **Նիսպում լավեցին հետևյալ հարցերը.**

**1. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին**  
**1.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի մայիսի 13-ից 24-ը Վրաստանի ֆինանսների նախարարության, ֆինանսների նախարարության ակադեմիայի և Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) կողմից կազմակերպված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության աշխատանքային քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Բ. Պողոսյան, Հ. Զանլաթյան/*

**1.2. Հաղորդում՝ Սերբիայի Բելգրադ քաղաքում 2019 թվականի մայիսի 21-ից 23-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից հրավիրված «Տվյալների ինտեգրում. Վիճակագրական և աշխարհատարածական տվյալների ներուժի իրացում» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան/*

**1.3. Հաղորդում՝ Տաջիկստանի Դուշանբե քաղաքում 2019 թվականի մայիսի 21-ից 22-ը Էներգիայի միջազգային գործակալության (IEA) EU4Energy ծրագրի շրջանակում Էներգիայի միջազգային գործակալության վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ու ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Էներգետիկ վիճակագրությունը քաղաքականության վարման գործընթացում» թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Հ. Հովհաննիսյան, Ն. Մանդալյան/*

**1.4. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2019 թվականի մայիսի 23-ին Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության /ՇՄԵԳ/ և Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ENI-SEIS II EAST) տարածաշրջանային աշխատանքային խմբի համար կազմակերպված Բեռնի կոնվենցիայի N8 (2012)**

բանաձևի ներքո հաշվետվողականության և պահպանվող տարածքների ցուցանիշների մշակման վերաբերյալ աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա. Համբարձումյան/*

1.5. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2019 թվականի մայիսի 27-ից 29-ը Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման և արդիականացման ու գյուղատնտեսության կառուցվածքային հետազոտությունների կազմակերպման և անցկացման Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակի փորձի ուսումնասիրում. ուսումնական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Մանյան, Ա. Ավագյան, Լ. Գրիգորյան, Ա. Քոսակյան/*

1.6. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետության Նուր-Սուլթան քաղաքում 2019 թվականի մայիսի 28-ից 29-ը Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի հրավերով 2017թ. Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում, ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների փորձագետների համար կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Մ. Երիցյան, Ն. Ասրվաձապուրովա /*

1.7. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2019 թվականի մայիսի 28-ից 30-ը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հայաստանյան գրասենյակի հրավերով Սենդայի և ԿՁՆ-ի մոնիթորինգի շրջանակների ներքո գյուղատնտեսության, ձկնաբուծության եւ անտառային տնտեսություններում աղետների պատճառած ուղղակի կորուստների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ տարածաշրջանային վերապատրաստման դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ռ. Վարդանյան, Ա. Համբարձումյան/*

1.8. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2019 թվականի հունիսի 3-ից 5-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) և Իսլանդիայի վիճակագրության կողմից կազմակերպված «Տվյալներից դեպի վիճակագրություն. Պաշտոնական վիճակագրության արտադրում R-ի և Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի միջոցով (GSBPM)» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների համար ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ռ. Շարոյան, Վ. Մաճկալյան/*

**1.9. Հաղորդում՝ Ուկրաինայի Կին քաղաքում 2019 թվականի հունիսի 4-ից 7-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար կազմակերպված «Վիճակագրական տվյալների բացահայտման վերահսկում (SDC)» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ն. Մուշեղյան, Ռ. Պեպրոսյան, Կ. Եսայան/*

**1.10. Հաղորդում՝ Լյուքսեմբուրգի Լյուքսեմբուրգ քաղաքում 2019 թվականի հունիսի 5-ից 6-ը «Expertise France» կազմակերպության կողմից կազմակերպված «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» տարածաշրջանային ծրագրի հիմնական ազգային համակարգողների առաջին հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/*

**Որոշեցին՝**

**արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն**

*/Անհապական/*